ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՖԿՍՊԻ ՈՐԱԿԻ ԱՈՒԴԻՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

25.06.2025թ.

ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժնի կողմից 2024-2025 ուստարվա համար պլանավորվել էր իրականացնել Որակի ներքին աուդիտ «Մասնագիտության կրթական ծրագրեր (ՄԿԾ) և դասընթացներ, դասավանդման, ուսուցման և գնահատման գործող համակարգը» ոլորտի շրջանակներում (տես՝ *Ներքին աուդիտի իրականացման ծրագիր և ժամանակացույց 2024-2025 ուսումնական տարվա համար*):

Աուդիտի շրջանակներում առանձին ֆոկուս խմբային հանդիպումներ են անցկացվել ուսանողների խմբերի հետ (թվով՝ 8 ֆոկուս խումբ, յուրաքանչյուրում 10-12 հոգի): Արդյունքում յուրաքանչյուր կրթական ծրագրի համար վեր են հանվել ուսանողների կարիքները, ուժեղ և թույլ կողմերը: Սույն վերլուծության մեջ ներկայացվում են ֆոկուս խմբերի ընդհանրացված արդյունքները և խնդիրները, որոնք կրկնվում են տարբեր ամբիոններում:

- Ինստիտուտի ուսանողները բավականին կողմնորոշված և նպատակային են ընդունվել բուհ՝ հետագայում մասնագիտական ուղղությամբ շարունակելու նպատակով: Կարևոր առանձնահատկություն է դիտարկվել նաև ոլորտում միակ մասնագիտական բուհի կարգավիճակը: Մարզադպրոցների սաները սիրում են սպորտային մասնագիտությունը, ինչը իր հերթին կարևոր կողմնորոշիչ դեր է խաղում:
- Ուսանողների մեծ մասի կարծիքով Ինստիտուտի ուժեղ կողմերից է այն, որ դասախոսական կազմի մեծ մասը գործող մարզիչներ են կամ ոլորտի գործող մասնագետներ, ինչը հնարավորություն է տալիս ուսման ընթացքում անմիջական փորձառության փոխանակման, աշխատաշուկայի հետ անմիջական կապի ստեղծման, ոլորտի արդիական փոփոխություններին ծանոթ լինելու համար:
- Ուսանողների կողմից առավել կարևորվում են գործնական, պրակտիկ դասերը, քանի որ այդ ընթացքում ձևավորվում և ամրապնդվում են գործնական կարողություններն ու հմտությունները: Դրան է նպաստում նաև դասախոսական կազմի նախորդ կետում նկարագրված փորձառությունը: Սակայն մյուս կողմից այդ դասերի արդյունավետ անցկացման համար ուսանողները կարևորում են

ինստիտուտի ռեսուրսային բազայի արդիականացումը, որն իր հերթին խթան կհանդիսանա դասերին ավելի լավ հաճախելու համար:

• Հետազոտական աշխատանքների իրականացումը առավել տեսանելի է մասնագիտական առարկաների շրջանակում, այդ թվում՝ ինքնուրույն աշխատանքների ձևով, ուսանողական տպագրությունների և ավարտական աշխատանքների իրականացմամբ: Մյուս կողմից դասախոսների մի մասը ինքնուրույն աշխատանքները դեռ ձեռագիր են պահանջում, որը ուսանողները համարում են ժամանակի կորուստ և հնացած պահանջ:

• Չնայած նրան, որ բուհում չկան դասախոսների հետ նշանակված խորհրդատվության ժամեր, սակայն ուսանողների մեծ մասի կարծիքով առանձին օրեր նշանակելու անհրաժեշտություն չկա, քանի որ դասերի ընթացքում են լինում խորհրդատվությունները: Մի մասն էլ կարծում են, որ եթե լիներ անպայման կմասնակցեին:

• Ուսանողների բոլոր խմբերը գոհ են գրադարանից և առկա գրականությունից՝ նշելով, որ օգտվում են և բավարարված են առկա ռեսուրսներից:

• Ինստիտուտում պարբերաբար կիրառվում են ուսանողների կարիքների գնահատման գործիքներ (հարցումներ, քննարկումներ, հանդիպումներ), որոնց ընթացքում բարձրաձայնված որոշ խնդիրներ լուծվել են: Օրինակ՝ դասախոսի փոփոխման, դասի անցկացման այլ մեթոդի կիրառման, հրաձգարանի հարցի, լիֆտի վերանորոգման վերաբերյալ և այլն: Չնայած դրան, ռեսուրսներից գոհունակությունը դեռ բարձր չէ: Կան խնդիրներ, որոնք դեռ լուծված չեն: Հիմնական խնդիրները ջեռուցման, բուֆետի, լսարանների քանակի և հագեցվածություն, մարզադահլիճների վիճակի հետ է կապված, երբեմն ամեն մի մարզաձևի համար տարբեր տեղեր են գնում: Հաճախ է բարձրաձայնվում նաև դասացուցակի ոչ արդյունավետ կազմված լինելու փաստը:

• Ուսանողների կարծիքով որոշ դասախոսներ չեն կիրառում ժամանակակից մեթոդներ, ինչի արդյունքում դասերը ձանձրալի են դառնում: Վերջինս նաև անդրադառնում է դասերին հաճախելիության վրա, որը կարևոր խնդիր է համարվում: Մանավանդ, որ հանդիպումների ընթացքում նշվում են դասախոսներ, որոնց դասերից չեն բացակայում, անգամ աշխատելու հանգամանքը ուսանողներին չի խանգարում:

• Ուսանողների համար վերանայման կարիք ունի բուհում կիրառվող գնահատման համակարգը, քննությունների անցկացման ընթացակարգը, այդ թվում՝ ուշացման, բացակայությունների, հարցաշարերի նախապես տրամադրման, քննաշրջանի հագեցվածության (քննաշրջանում գրեթե ամեն օր քննություն ունենալու), գրավոր, թե բանավոր քննությունների անցկացման նախապատվության, դասախոսների կողմից քննության անցկացման տարբեր մոտեցումների կիրառման վերաբերյալ (որոշ դասախոսներ հարցաշարը դնում են Google Classroom–ում, որոշները հարցերը քննարկում են ուսանողների հետ, դասախոս կա, դա էլ չի անում):

• Ուսանողները կարծում են, որ Ուսանողական խորհուրդը պետք է ակտիվացնի իր աշխատանքները՝ կազմակերպվող միջոցառումներում ընդգրկելով ուսանողների ավելի լայն շրջանակ և նոր նախաձեռնություններով հանդես գա: